600.0280.19.08.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2020 թվականի №280Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի №373Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի հուլիսի 20-ի №20/07-007 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երեք տարով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի №373Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0558 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0558 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը, Ընկերությանն ընդգրկել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրում և Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արտակարգ դրությունը հաշվի առնելով՝ ընդառաջել և Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելիս Ընկերության ներկայացրած բանկային երաշխիքը կիսով չափ պետական բյուջե չփոխանցել, ազատել նոր բանկային երաշխիք ապահովելու պարտավորությունից: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի նոյեմբերի 17-ին որոշմամբ վարույթ ընդունված №ՍԴ2/0577/02/16 քաղաքացիական գործով (ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ

բաժնետիրական ընկերության հայցի ընդդեմ Ընկերության՝ 35,944,644.74 դրամ, որպես պատճառված վնասի հատուցման գումար բռնագանձելու պահանջի մասին և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության՝ գումարի բռնագաձման պահանջի մասին) սկզբնական հայցապահանջը դատարանի վճռով մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ կարճվել:

Ընկերությունը նշել է նաև, որ իր և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև համատեղ օգտագործվող ջրատարի շուրջ առաջացած խնդրի հետևանքով «Լեռ-Էքս-ՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի աշխատանքը խաթարվել է, և Ընկերությունը կրել է 11 մլն դրամի վնաս: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի №57Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել 2011 թվականի հունիսի 30-ի №927Ն որոշման մեջ, որով հաստատվել է բնապահպանական թողքի որոշման նոր մեթոդիկա: Ընկերությունը կատարել է «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի ջրօգտագործման թույլտվության բնապահպանական թողքի վերահաշվարկ, որի հետևանքով ենթադրվում է նաև նախագծային փաստաթղթերի փոփոխություն: 2016 թվականի օգոստոսի 8-ի №16/08-35 գրությամբ Ընկերությունը դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման տեխնիկական պայման ստանալու համար, սակայն մինչև այժմ հարցին լուծում չի տրվել,

բ) Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 27-ի №ՍՇ/34.1-Մ2-5/3217-2020 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հանգամանք լինելու հարցի գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հիմնավորումներ:

գ) Ընկերությունը Հանձնաժողով ներկայացրած սույն թվականի օգոստոսի 3-ի №20/08-008 գրությամբ ըստ էության կրկնել է իր նախորդ գրության փաստարկները, ի լրումն խնդրելով նաև դիտարկել Ընկերության՝ երաշխիքը կիսով չափ պետական բյուջե չփոխանցելու և նոր երաշխիք ապահովելու պարտավորությունից ազատման հնարավորությունն օրենսդրական փոփոխությունների միջոցով: 2020 թվականի օգոստոսի 11-ի №20/08-009 գրությամբ (ի լրումն №20/08-008 գրության) ներկայացրել է «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար կատարված աշխատանքների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող գումարների վերաբերյալ տեղեկանք, իսկ օգոստոսի 12-ի №20/08-010 գրությամբ (ի

լրումն №20/07-007 գրության) ներկայացրել է №20/07-007 գրությանը կից գրությունների պատճենները:

դ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 81-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման նպատակով էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը՝ բացառությամբ պետություն-մասնավոր գործընկերություն գործարքների շրջանակում տրամադրված համապատասխան լիցենզիաների, երկարաձգվում է 2-րդ և յուրաքանչյուր հաջորդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ նախորդ երկարաձգման ժամկետից 2 ամիս պակաս ժամկետով,
- №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.

  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված

հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

ե) գործող իրավակարգավորումների համաձայն՝ ԼԷ№0558 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը հայցվող 3 տարվա փոխարեն Կարգի համաձայն կարող է երկարաձգվել 1 տարի 2 ամսով՝ նախորդ երկարաձգման մեկ տարի 4 ամիս ժամկետից 2 ամիս պակաս ժամկետով:

զ) Ընկերությանը կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրում ընգրկելը Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից դուրս է, իսկ Կարգը Հանձնաժողովի կողմից հաստատվել է՝ հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 24-րդ հոդվածը, որում երաշխիքների ներկայացմանն ու պետական բյուջե փոխանցմանն առնչվող դրույթները բխում են նույն օրենքի 26-րդ հոդվածի իրավակարգավորումներից: Ներկայումս Հանձնաժողովի գնահատմամբ Կարգում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

է) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերության ներկայացրած փաստաթղթերով նշված հանգամանքների առկայությունը չի հիմնավորվել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի

1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընկերությունը չի հիմնավորել նաև պատճառահետևանքային կապը այդ հանգամանքների և ԼԷ №0558 լիցենզիայի պայմաններով ամրագրված Կայանի կառուցման պարտավորության կատարման անհնարինության միջև, մասնավորապես՝

- №ՍԴ2/0577/02/16 քաղաքացիական գործի քննությունը վերաբերում է Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0226, №0259, №0278 և №0301 լիցենզիաներին համապատասխան արդեն իսկ շահագործվող «Լեռ-Էքս ՀԷկ-2», «Լեռ էքս ՀԷԿ-4», «Լեռ էքս ՀԷԿ-6» և «Լեռ-Էքս ՓՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմաններով նախատեսված պահանջների կատարումից ծագող իրավահարաբերություններին, և Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել նշված հանգամանքով պայմանավորված ԼԷ №0558 լիցենզիայի պայմանների կատարման անհնարինությունը,
- Էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման տեխնիկական պայման տրամադրելու վերաբերյալ Ընկերության 2016 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը ուղղված №16/08-35 գրությամբ ներկայացված չէ ԼԷ №0558 լիցենզիայի պայմանների կատարման անհնարինությանը հանգեցնող որևէ հիմնավորում.
- Կայանը հանդիսանում է բնական ջրահոսքի վրա կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայան, մինչդեռ Ընկերության գրություններով նշված՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ հարաբերությունները վերաբերում են ջրատարի կառուցմանը, ավելին, նշված է նաև, որ այն խոչընդոտել է «Լեռ-Էքս ՀԷկ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի աշխատանքը, որը որևէ կապ չունի ԼԷ №0558 լիցենզիայի և, առավել ևս, դրանով նախատեսված պայմանների կատարման անհնարինության հետ,
- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի հունիսի 21-ի №5/18-2/180223 գրությամբ ջրօգտագործման թույլտվության երկարաձգման նպատակով Ընկերությանը պահանջ է ներկայացվել էկոլոգիական թողքը համապատասխանեցնել օրենսդրությանը: Նշված

հանգամանքը ի հայտ է եկել դեռևս նախորդ կառուցման ժամանակահատվածում, և Ընկերության կողմից չի հիմնավորվել դրանով պայմանավորված ԼԷ №0558 լիցենզիայի պայմանների կատարման անհնարինությունը ներկայումս: Ավելին, չի հիմնավորվել, թե ինչն է նշված հանգամանքի արտակարգությունը և անկանխելիությունը,

- Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ Ընկերությունը ԼԷ №0558 լիցենզիայի պայմանների կատարմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ հիմնավորում ևս չի ներկայացրել,

և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Մեկ տարի երկու ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №373Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0558 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի օգոստոսի 21-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի հոկտեմբերի 21-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0558 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հունիսի 4-ի №O.AB.100.11CB.ESC.2.3458.19 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 2 875 000 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարից 1 437 500 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2 875 000 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 5-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
19 օգոստոսի 2020թ.